

բնութիւնը ոչինչ ունի կեղծ: Մինչդէռ դուք զբաղած էք կեղծաւորութեամբ: Օր պիտի գայ, որ ձեր շինած կեղծերուն ալ կեղծերը պիտի շինէք տակաւին:

-Չէ՞ք գտներ, սակայն, որ մեր կեանքը աւելի հանգստաւետ է, աւելի բարձր, քան ձերինը:

-Ձեր կեանքը, հուա՛, հուա՛, հուա՛, հիվուա՛...

Ծերունին կը խնդար՝ իր ձիւթի նման անթերի ատամնաշարը ցուցադրելով: Անցորդները նոյնպէս կը խնդային: Փափաք մը ունէի անոնց պոռալու.

-Ապուշներ, ի՞նչ կը խնդաք: Այս «վայրենի»ն մեր քթին կը խնդայ...

Նիամ-Նիամցին շարունակեց.

-Ուրեմն շա՛տ կը հաւնիք ձեր կեանքին: Տարօրինակ: Տեսնուած քան չէ, որ խաչեցեալ մը հաւնի իր խաչին, մահուան դատապարտուած մը հաւնի իր կիլեոթինին, ելեկտրահարութեան սահմանուած մը հաւնի ելեկտրական աթոռին: Ձեր կեանքը, եթէ կատակերգութիւն է, շատ ողբերգական է: Իսկ եթէ ողբերգութիւն է, խիստ կատակերգական է: Անշուշտ, ձեր հանգստութիւնն ալ, ինչպէս բարձրութիւնը, կեղծ է, եթէ սուտ չէ:

-Եւ սակայն, վերջ ի վերջոյ, մենք ենք քաղաքակրթեալները...

-Ձեզի ըլլայ ձեր քաղաքակրթութիւնը: Վրան եթէ ափերով ոսկի դնէք, չենք ընդունիր: Ձեր քաղաքակրթութիւնը շինուած է ձեր ստամոքսին վրայ: Ո՛րքան աղտոտ է հիմը: Ճահիճի վրայ կանգնած է ան: Ձեր քաղաքակրթութիւնը հոգիով ու մարմինով անօթի լարախաղացութիւն է: Դուք ձեր քաղաքակրթութեամբ մենե հազար անգամ աւելի բարբարոս էք:

-Ձեր կողմերը քաղաքակրթուած մարդիկ չե՞ն եկած:

-Ես կը բնակիմ Նիամ Նիամի գիւղերէն Թանկայնոշա աւանը, ուր կ'ապրին միմիայն վայրենիներ:

-Չիս ալ Թանկայնոշա կը տանի՞ք...

-Կը նախընտրեմ հազար թօն թոյն տանիլ ժողովուրդիս, քան ձեզ եւ կամ ձեր նմաններէն մէկը: Կրնա՞ք, հրաշքով մը, մերկանալ ձեր քաղաքակրթութենէն: